

## ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻՑ

### ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՂԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ս. Էջմիածին**

Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցվո արևելյան թեմի հոգևորականներու տարեկան համագումարը տեղի ունեցավ մայիս 5-ին Սփրինգֆիլդի մեջ, և Վեհիդ պատգամը ունկնդրվեցավ երախտագիտությամբ:

Հոգևորականաց համագումարը կներկայացնե որդիական սերն ու հարգանքը հանդեպ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետիդ՝ աղոթելով, որ Աստված երկար և արևշատ տարիներ պարգևե Ձերդ Սրբության և անսասան պահե Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ Տիրոջ փառքին և մեր ժողովուրդին հոգևոր բարգավաճումին համար:

**ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Սփրինգֆիլդ,
9 մայիս 1987 թ.

---

### ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՂԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ս. Էջմիածին**

Հայաստանյայց Եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի արևելյան վիճակի 85-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը կգումարվի Սփրինգֆիլդ Մասաչուսեթի Սուրբ Մարկոս Հայաստանյայց Եկեղեցվո հյուրընկալությամբ՝ մայիս 7-են մինչև մայիս 9: Հետ ունկնդրության Ձերդ Սրբության ողջույնի և օրհնության պատգամին՝ ուղղված թեմական պատգամավորական ժողովին, ներկա պատգամավորները իրենց անխախտ հավատարմությունը և խոր հարգանքը արձանագրեցին հանդեպ Ձերդ Սրբության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Կաղոթենք, որ Տերը միշտ պայծառ, բարգավաճ և անսասան պահե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և Ձերդ Վեհափառության պարգևե մշտատև քաջառողջություն, արևշատություն և արդյունավետ տարիներ:

**ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

9 մայիս 1987 թ.
Սփրինգֆիլդ,

---